ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2021 թվականի N 294-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2021թ.հոկտեմբերի 29-ի թիվ 294-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բովանդակություն

Ներածական մաս 3 - 4 էջեր

Ամփոփագիր 4 - 7 էջեր

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները 7 – 14 էջեր

Անհամապատասխանությունների
վերաբերյալ գրառումներ 14 - 20 էջեր

Արձանագրված այլ փաստեր 20 - 22 էջեր

Առաջարկություններ 22 էջ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 224-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկաի չափանիշներ	ՀՀ կառավարության 30.12.20202թ. «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի օգոստոսի 9-ից մինչև հոկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը :

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ինններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2021 թվականի առաջին կիսամյակի ծախսերի ֆինանսավորումը կազմել է ճշտված պլանի 83.9 %-ը, դրամարկղային ծախսը կազմել է 5,672,764.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 81.1 %-ը: ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսվել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է իրականացնի վեց ծրագրեր:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել է.

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար կնքվել է 13.04.2021թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-1 պայմանագիր՝ 48,958.2 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել վեց անվանում հանդերձանք: Սակայն, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել 37,501.8 հազ. դրամի հանդերձանք, որի համար պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի տույժ՝ 487.8 հազ. դրամ:
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «Վանգակ» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար կնքվել է 13.04.2021թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-2 պայմանագիր՝ 9,348.0 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել երեք անվանում հանդերձանք: Սակայն, «Վանգակ» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել 6,498.0 հազ. դրամի հանդերձանք, որի համար պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի տույժ՝ 91.0 հազ. դրամ:

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «Անգա Տրանս» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար կնքվել է 13.04.2021թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-3 պայմանագիր՝ 2,815.2 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել երկու անվանում հանդերձանք: Սակայն, «Անգա Տրանս» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել 2,599.2 հազ. դրամի հանդերձանք, որի համար պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի տույժ՝ 36.4 հազ. դրամ:
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և Ա/Ձ Գայանե Ղազազյանի միջև հանդերձանքի գնման համար կնքվել է 13.04.2021թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-4 պայմանագիր՝ 11,996.4 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել երկու անվանում հանդերձանք: Սակայն, Ա/Ձ Գայանե Ղազազյանի կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել 4,498.6 հազ. դրամի հանդերձանք, որի համար պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի տույժ՝ 94.5 հազ. դրամ:
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ միջև վառելիքի գնման համար կնքվել է 29.12.2020թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/1 պայմանագիր՝ 81,150.0 հազ. դրամ արժեքով, որով առաջին եռամսյակում նախատեսվել էր ձեռք բերել 42,750.0 հազ. դրամի ռեգուլյար տեսակի բենզին և 38,400.0 հազ. դրամի դիզելային վառելիք: Առաջին եռամսյակում մատակարարվել է ընդամենը 54,100.0 հազ. դրամի բենզին և դիզելային վառելիք: Փաստորեն, «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ կողմից պայմանագրի շրջանակում չի մատակարարվել գումարային 27,050.0 հազ. դրամի բենզին և դիզելային վառելիք ու 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ մատակարարումը ուշացվել է 64 աշխատանքային օրով, որի համար ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի տույժ՝ 865.6 հազ. դրամ:

Հաշվեքննության ենթարկված մնացած պայմանագրերով մատակարարման ժամկետի ուշացումներ չեն արձանագրվել:

ՀՀ կառավարության 3.06.2021թ. թիվ 923-Ն որոշումով «Տեխնիկական անվտանգության կանոնակարգում» ծրագրի շրջանակում «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի անվտանգության ապահովում» միջոցառման իրականացման համար ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 285,953.6 հազ. դրամ: Միջոցառման իրականացման համար ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը մեկ անձից գնում կատարելու ձևով «Նաիրիտ գործարանե» ՓԲԸ հետ կնքել է պայմանագիր՝ 285,953.6 հազ. դրամ արժեքով: Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ կատարողը մատուցելու է «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի տեխնոլոգիական համակարգերում, տարողություններում և սարքավորումներում առկա քիմիական նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանության ծառայություններ:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում 2019 թվականին իրականացված հաշվեքննության ընթացքում արձանագրվել էր, որ «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի տեխնոլոգիական համակարգում, տարողություններում և սարքավորումներում առկա քիմիական նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանությանը աջակցելու համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության 23.02.2017թ. թիվ 165-Ն և 13.07.2017թ. թիվ 803-Ն որոշումներով հատկացվել է գումարային 163,185.4 հազ. դրամ: Հատկացված գումարը բավարարել է «Նաիրիտ գործարան» ՓԲԸ փաստացի աշխատողների 2017 թվականի և 2018 թվականի առաջին չորս ամիսների աշխատանքի վարձատրության ծախսերը կատարելու համար: Այդ ժամանակահատվածում «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում առկա քիմիական նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանությունը իրականացվել է 121 հաստիքային միավորներով՝ 11,454.7 հազ. դրամ ամսական աշխատավարձի ֆոնդով: Ներկայում, յոթ ամիսների համար, առանց հաշվի առնելու փոխհատուցման նպաստի ծախսերը, աշխատավարձի միջին ամսական ֆոնդը կազմել է 34,768.3 հազ. դրամ: Փաստորեն, նույն տեխնիկական բնութագրով նույն գործառույթները

իրականացնելու համար աշխատողների աշխատանքի վարձատրության ամսական ծախսը աճել է շուրջ 3 անգամ, իսկ փաստացի աշխատողների թվաքանակը կրկնապատկվել է: Մատուցված ծառայության շրջանակում աշխատողների վարձատրության ծախսերի և աշխատողների թվաքանակի էական աճի հիմնավորվածությունը հնարավոր է պարզել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում ստուգում իրականացնելու միջոցով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ «Արտակարգ իրավիճակների բնագավառում խորհրդատվական և հոգեբանական ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակում 2021 թվականի առաջին կիսամյակի համար ճշտված պլանով նախատեսվել է 33,334.0 հազ. դրամ: Միջոցառման շրջանակում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը 2020 թվականի ռազմական գործողություններին մասնակցած անձանց և հանրության հոգեբանական վերականգնման ծառայության ձեռք բերման նպատակով «Սեդա Ղազարյանի անվան հոգեկան առողջության» հիմնադրամի հետ կնքել է 01.04.2021թ. թիվ ՀԲՄԾՁԲ-ԱԻՆ-21/31 պայմանագիր՝ 100,000.0 հազ. դրամ արժեքով: 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ պայմանագրի շրջանակում ծառայություններ չեն մատուցվել և ծախսեր չեն կատարվել:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2021 թվականի առաջին կիսամյակի համար ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը պետական բյուջեի ծրագրերով նախատեսվել է հատկացնել 6,636,110.5 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 6,996,087.8 հազ. դրամ, ֆինանսավորվել է 5,867,148.7 հազ. դրամ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2021 թվականի առաջին կիսամյակի ֆինանսավորումը պետական բյուջեից

հազ. դրամ

Ծրագրային միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Տեխնիկական անվտանգության կանոնակարգում				
Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ	18,287.4	18,287.4	18,287.4	18,287.4
«Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի անվտանգության ապահովում	285,953.6	231,252.4	231,252.4	231,252.4
Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողությունների զարգացում				
Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար անձնակազմի և մասնագետների վերապատրաստման կազմակերպում	53,765.2	53,765.2	53,765.2	56,219.3
Սեյսմիկ պաշտպանություն				
Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրում	323,802.9	323,802.9	323,802.9	322,400.9
Փրկարարական ծառայություններ				
Փրկարարական ծառայություններ	5,514,751.5	4,529,508.8	4,335,325.7	5,113,910.5
Արտակարգ իրավիճակներում մարդասիրական աջակցության կազմակերպում	17,266.6	17,266.6	17,266.6	18,603.9
Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման կազմակերպում	4,699.8	2,294.0	2,294.0	2,294.0
Սողանքային և քարաթափման երևույթների ուսումնասիրում	950.0	-	-	-
Փրկարարական ծառայողներին և փրկարար շներին դեղորայքով ապահովում	365.6	-	-	-
Փրկարարական ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում	1,195.0	-	-	-
Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում				
Պետական ռեզերվների պահպանում	248,954.8	226,976.1	226,976.1	226,976.1

Նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորում և պահպանում	10,388.0	-	-	-
Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ				
Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակում, խորհրդատվական ծառայությունների տրամադրում և մոնիտորինգի իրականացում	481,149.0	462,886.1	452,685.1	518,156.2
Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ	1,109.2	1,109.2	1,109.2	1,109.2
Արտակարգ իրավիճակների բնագավառում խորհրդատվական և հոգեբանական ծառայությունների տրամադրում	33,334.0	-	-	-
Արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում	115.2	-	-	-
Ընդամենը	**6,996,087.8**	**5,867,148.7**	**5,672,764.5**	**6,509,209.8**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2021 թվականի առաջին կիսամյակի ծախսերի ֆինանսավորումը կազմել է ճշտված պլանի 83.9 %-ը, դրամարկղային ծախսը կազմել է 5,672,764.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 81.1 %-ը:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսվել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է իրականացնի վեց ծրագրեր:

«Տեխնիկական անվտանգության կանոնակարգում» ծրագրով, որի 2021 թվականի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 304,241.0 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 249,539.8 հազ. դրամ կամ ճշտված պլանի 82.0 %-ը: Ծրագրի միջոցառումները երկուսն են.

- «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 18,287.4 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են հինգ արդյունքի

չափորոշիչներ՝ կանոնակարգերի մշակման քանակ, արտադրական պատահարների և տեխնածին վթարների քանակ, արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործողների ուսուցում և որակավորում:

- «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի անվտանգության ապահովում» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 285,953.6 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 231,252.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 80.9 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ՝ տարբեր վտանգավորության նյութերի քանակ, պահպանվող հիմնական միջոցների քանակ և հրավտանգ նյութերի նկատմամբ հսկողության իրականացում (ժամ):

«Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողությունների զարգացում» ծրագրով իրականացվում է մեկ միջոցառում՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար անձնակազմի և մասնագետների վերապատրաստման կազմակերպում», որի 2021 թվականի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 53,765.2 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են յոթ արդյունքի չափորոշիչներ, որոնք հիմնականում վերաբերվում են ուսուցման և վերապատրաստման ծրագրերի մասնակիցների թվին:

«Սեյսմիկ պաշտպանություն» ծրագրով իրականացվում է մեկ միջոցառում՝ «Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրում», որի 2021 թվականի առաջին եռամսյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 323,802.9 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են յոթ արդյունքի չափորոշիչներ, որոնք վերաբերվում են դիտարկումների քանակներին և սեյսմիկ պաշտպանության վարքականոնների ուսուցմանը:

«Փրկարարական ծառայություններ» ծրագրով, որի 2021 թվականի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 5,539,228.5 հազ.դրամ,

ֆինանսավորումը կազմել է 4,549,069.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 82.1 %-ը, դրամարկղային ծախսը՝ 4,364,886.2 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.1 %-ը: Ծրագրի միջոցառումները վեցն են.

- «Փրկարարական ծառայություններ» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 5,514,751.5 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 4,529,508.8 հազ. դրամ կամ ճշտված պլանի 82.1 %-ը, դրամարկղային ծախսը՝ 4,345,325.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 78.8 %-ը: Միջոցառման համար սահմանված են հինգ արդյունքի չափորոշիչներ, որոնք հիմնականում վերաբերվում են ահազանգերի ստացման պահից մինչև մեկնում, մինչև կանչի վայր հասնելու և մինչև գործողությունների ավարտի միջին ժամանակահատվածներին:
- «Արտակարգ իրավիճակներում մարդասիրական աջակցության կազմակերպում» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 17,266.6 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ՝ արտակարգ իրավիճակների արձագանքման մասնակցություն, մարդասիրական օգնության տրամադրում տուժած բնակչությանը և փրկարար ծառայության ստորաբաժանումների անձնակազմի ուսուցման ու որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում:
- «Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման կազմակերպում» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 4,699.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 2,294.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 48.8 %-ը: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ՝ կրթաթոշակ ստացող փրկարարական աշխատակիցների թիվ: Հաշվեքննությամբ պարզվել է, որ

ուսուցում ստացող վեց ուսանողներից առաջին կիսամյակի ընթացքում երեքը ավարտել են ուսումը, սակայն միջոցառման պլանի ճշտում չի կատարվել:

- «Սողանքային և քարաթափման երևույթների ուսումնասիրում» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 950.0 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ՝ սողանքային տեղամասերի ուսումնասիրումների քանակ: Հաշվեքննությամբ պարզվել է, որ ֆինանսական սուղ միջոցներ պահանջող անվտանգային խնդիր հանդիսացող Լոռու և Տավուշի մարզերի սողանքային տեղամասերի ուսումնասիրումը նախատեսված ժամկետում չի կատարվել համապատասխան պայմանագիրը կնքման փուլում գտնվելու պատճառաբանությամբ:
- «Փրկարարական ծառայողներին և փրկարար շներին դեղորայքով ապահովում» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 365.6 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ՝ բնածին և տեխնածին աղետներից տուժածների քանակ: Հաշվեքննողի կարծիքով միջոցառման արդյունքի չափորոշիչը՝ բնածին և տեխնածին աղետներից տուժածների քանակը չի առնչվում փրկարարական ծառայողներին և փրկարար շներին դեղորայքով ապահովման միջոցառմանը:
- «Փրկարարական ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,195.0 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ՝ համակարգչային սարքավորումների և գրասենյակային գույքի քանակ, սարքավորումների ծառայության միջին ժամկետ (տարի):

«Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում» ծրագրով, որի 2021 թվականի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 259,342.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են

226,976.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 87.5 %-ը: Ծրագրի միջոցառումները երկուսն են.

- «Պետական ռեզերվների պահպանում» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 248,954.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 226,976.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 91.2 %-ը: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:
- «Նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորում և պահպանում» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 10,388.0 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:

«Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրով, որի 2021 թվականի առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 515,707.4 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 463,995.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 90.0 %-ը, դրամարկղային ծախսը՝ 453,794.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 88.0 %-ը: Ծրագրի միջոցառումները չորսն են.

- «Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակում, խորհրդատվական ծառայությունների տրամադրում և մոնիտորինգի իրականացում» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 481,149.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 462,886.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.2 %-ը, դրամարկղային ծախսը՝ 452,685.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 94.1 %-ը: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:
- «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է

1,109.2 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:

- «Արտակարգ իրավիճակների բնագավառում խորհրդատվական և հոգեբանական ծառայությունների տրամադրում» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 33,334.0 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:
- «Արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման կատարման համար առաջին կիսամյակի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 115.2 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ՝ գրասենյակային գույքի քանակ:

Ընդհանուր առմամբ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող տասնվեց միջոցառումներից հինգ միջոցառումների համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն: Մնացած տասնմեկ միջոցառումներով սահմանված արդյունքի չափորոշիչների ցուցանիշները հիմնականում գերակատարվել են:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ենթարկված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից առանձին միջոցառումների կատարման համար կնքված պայմանագրերը ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Հաշվեքննության ենթարկված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պայմանագրեր

հազ. դրամ

Կատարող	Պայմանագրի համար	Պայմանագրի գումար	Վճարված գումար
Փրկարար ծառայություն			
«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-1	48,958,200	11,370,000
«Վանգակ» ՍՊԸ	ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-2	9,348,000	2,850,000

«Անգա Տրանս» ՍՊԸ	ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-3	2,815,200	216,000
ԱՁ Գայանե Ղազազյան	ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-4	11,996,400	6,598,020
«ԱԲԻ» ՍՊԸ	ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-5	487,500	268,125
«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ	ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-6	1,449,000	796,950
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ	ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/1	81,150,000	36,517,500
«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ	ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/2	14,310,000	14,310,000
Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ			
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ	ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/8	5,737,000	5,737,000
«Նաիրիտ գործարանե ՓԲԸ-ի անվտանգության ապահովում			
«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ	ՀՄԱԾՁԲ-ԱԻՆ-21/11	285,953,600	231,252,364
Ընդամենը		**462,204,900**	**309,915,959**

Նշված պայմանագրերի հաշվեքննության արդյունքում արձանագրվել է.

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար կնքվել է 13.04.2021թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-1 պայմանագիր՝ 48,958.2 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել վեց անվանում հանդերձանք: Պայմանագրի գնման ժամանակացույցի համաձայն, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել ապրիլ և մայիս ամիսները: Կնքված 29.04.2021թ. թիվ 1 համաձայնագրով ապրիլ ամսվա մատակարարումը երկարաձգվել է մինչև մայիսի 20-ը: Սակայն, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել 37,501.8 հազ. դրամի հանդերձանք, որից 12,402.8 հազ. դրամի հանդերձանքի մատակարարումը ուշացվել է 22 աշխատանքային օրով, իսկ 25,089.0 հազ դրամի հանդերձանքի մատակարարումը՝ 28 աշխատանքային օրով: Փաստորեն, 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի համար տույժ՝ 487.8 հազ. դրամ:
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «Վանգակ» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար կնքվել է 13.04.2021թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-2 պայմանագիր՝ 9,348.0 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել երեք անվանում հանդերձանք: Պայմանագրի գնման ժամանակացույցի համաձայն, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել ապրիլ ամիսը: Կնքված 29.04.2021թ. թիվ 1 համաձայնագրով մատակարարման ժամկետը

երկարաձգվել է մինչև մայիսի 20-ը: Սակայն, «Վանգակ» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել 6,498.0 հազ. դրամի հանդերձանք, որի մատակարարումը ուշացվել է 28 աշխատանքային օրով: Փաստորեն, 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի համար տույժ՝ 91.0 հազ. դրամ:

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «Անգա Տրանս» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար կնքվել է 13.04.2021թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-3 պայմանագիր՝ 2,815.2 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել երկու անվանում հանդերձանք: Պայմանագրի գնման ժամանակացույցի համաձայն, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել ապրիլ ամիսը: Կնքված 29.04.2021թ. թիվ 1 համաձայնագրով մատակարարումը երկարաձգվել է մինչև մայիսի 20-ը: Սակայն, «Անգա Տրանս» ՍՊԸ կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել 2,599.2 հազ. դրամի հանդերձանք, որի մատակարարումը ուշացվել է 28 աշխատանքային օրով: Փաստորեն, 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի համար տույժ՝ 36.4 հազ. դրամ:
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և Ա/Ձ Գայանե Ղազազյանի միջև հանդերձանքի գնման համար կնքվել է 13.04.2021թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-4 պայմանագիր՝ 11,996.4 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել երկու անվանում հանդերձանք: Պայմանագրի գնման ժամանակացույցի համաձայն, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել ապրիլ ամիսը: Սակայն, Ա/Ձ Գայանե Ղազազյանի կողմից 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի մատակարարվել 4,498.6 հազ. դրամի հանդերձանք, որի մատակարարումը ուշացվել է 42 աշխատանքային օրով: Փաստորեն, 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի համար տույժ՝ 94.5 հազ. դրամ:
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ միջև վառելիքի գնման համար կնքվել է 29.12.2020թ. թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/1

պայմանագիր՝ 81,150.0 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել 42,750.0 հազ. դրամի ռեգուլյար տեսակի բենզին և 38,400.0 հազ. դրամի դիզելային վառելիք: Պայմանագրի գնման ժամանակացույցի համաձայն, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2021 թվականի առաջին եռամսյակը: Առաջին եռամսյակում մատակարարվել է ընդամենը 54,100.0 հազ. դրամի բենզին և դիզելային վառելիք: Փաստորեն, «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ կողմից պայմանագրի շրջանակում չի մատակարարվել գումարային 27,050.0 հազ. դրամի բենզին և դիզելային վառելիք ու 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ մատակարարումը ուշացվել է 64 աշխատանքային օրով, որի համար ենթակա է հաշվարկել և գանձել ուշացված օրերի տույժ՝ 865.6 հազ. դրամ:

Հաշվեքննության ենթարկված մնացած պայմանագրերով մատակարարման ժամկետի ուշացումներ չեն արձանագրվել:

- ՀՀ կառավարության 3.06.2021թ. թիվ 923-Ն որոշումով «Տեխնիկական անվտանգության կանոնակարգում» ծրագրի շրջանակում «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի անվտանգության ապահովում» միջոցառման իրականացման համար ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 285,953.6 հազ. դրամ: Միջոցառման իրականացման համար ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը մեկ անձից գնում կատարելու ձևով «Նաիրիտ գործարանե» ՓԲԸ հետ կնքել է 14.06.2021թ. թիվ ՀՄԱԾՁԲ-ԱԻՆ-21/11 պայմանագիր՝ 285,953.6 հազ. դրամ արժեքով: Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ կատարողը մատուցելու է «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի տեխնոլոգիական համակարգերում, տարողություններում և սարքավորումներում առկա քիմիական նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանության ծառայություններ: Համաձայն «Նաիրիտ գործարան» ՓԲԸ կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը ներկայացված տեղեկանքի, պայմանագրով նախատեսված գումարի հաշվին 2021 թվականի մայիսի 31-ի դրությամբ ենթակա են վճարման ընկերության կողմից կատարված անհետաձգելի ծախսերը՝ 285,953.6 հազ. դրամ,

որից աշխատավարձ և դրան հավասարեցված պարտադիր վճարներ՝ 231,252.4 հազ. դրամ: Պայմանագրով նախատեսվել է, որ պետք է վճարվեն աշխատողների 2020 թվականի նոյեմբեր, դեկտեմբեր և 2021 թվականի հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս ամիսների աշխատավարձերը ու աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի 2021 թվականի մարտ, ապրիլ, մայիս ամիսների փոխհատուցման նպաստները: Պայմանագրով վճարումը պետք է իրականացվեր ներկայացված ամսական վճարման տեղեկագրերի հիման վրա:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Նաիրիտ գործարան» ՓԲԸ կողմից ներկայացված այդ ամիսների աշխատավարձերի տեղեկագրում ընդգրկված են 260 աշխատողների տվյալներ: 2021 թվականի մարտ, ապրիլ, մայիս ամիսների նպաստառուների ցուցակում յուրաքանչյուր ամիս ներառված են 19 անձ, որոնց նպաստը գումարային ամսական կազմում է 1,309.3 հազ. դրամ:

«Նաիրիտ գործարան» ՓԲԸ կողմից ներկայացված չվճարված աշխատավարձերի վերաբերյալ տեղեկանքի և նպաստ ստացողների ցանկի համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը փոխանցել է ընկերությանը 231,252.4 հազ. դրամ, որից 3,928.0 հազ. դրամը՝ աշխատողների առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման նպաստ:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2021 թվականի հունվար ամսվա համար հաշվարկված աշխատավարձերը ըստ աշխատավարձի տեղեկագրի կազմել են գումարային 38,185.4 հազ. դրամ, սակայն չվճարված աշխատավարձերի վերաբերյալ տեղեկանքում այդ ամսվա համար ներկայացվել է որպես հաշվարկված աշխատավարձ 38,385.4 հազ. դրամ: Արդյունքում, «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ին պետական բյուջեից վճարվել է 200.0 հազ. դրամով ավելի գումար:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում 2019 թվականին իրականացված հաշվեքննության ընթացքում արձանագրվել էր, որ «Նաիրիտ

գործարան» ՓԲԸ-ի տեխնոլոգիական համակարգում, տարողություններում և սարքավորումներում առկա քիմիական նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանությանը աջակցելու համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության 23.02.2017թ. թիվ 165-Ն և 13.07.2017թ. թիվ 803-Ն որոշումներով հատկացվել է գումարային 163,185.4 հազ. դրամ: Հատկացված գումարը բավարարել է «Նաիրիտ գործարան» ՓԲԸ փաստացի աշխատողների 2017 թվականի և 2018 թվականի առաջին չորս ամիսների աշխատանքի վարձատրության ծախսերը կատարելու համար: Այդ ժամանակահատվածում «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում առկա քիմիական նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանությունը իրականացվել է 121 հաստիքային միավորներով՝ 11,454.7 հազ. դրամ ամսական աշխատավարձի ֆոնդով: Ներկայում, յոթ ամիսների համար, առանց հաշվի առնելու փոխհատուցման նպաստի ծախսերը, աշխատավարձի միջին ամսական ֆոնդը կազմել է 34,768.3 հազ. դրամ: Փաստորեն, նույն տեխնիկական բնութագրով նույն գործառույթները իրականացնելու համար աշխատողների աշխատանքի վարձատրության ամսական ծախսը աճել է շուրջ 3 անգամ, իսկ փաստացի աշխատողների թվաքանակը կրկնապատկվել է: Մատուցված ծառայության շրջանակում աշխատողների վարձատրության ծախսերի և աշխատողների թվաքանակի էական աճի հիմնավորվածությունը հնարավոր է պարզել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ում ստուգում իրականացնելու միջոցով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ «Արտակարգ իրավիճակների բնագավառում խորհրդատվական և հոգեբանական ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակում «մասնագիտական ծառայություններ» հոդվածով 2021 թվականի առաջին կիսամյակի համար ճշտված պլանով նախատեսված 33,334.0 հազ. դրամի ծախսերը չեն կատարվել: Միջոցառման շրջանակում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը

2020 թվականի ռազմական գործողություններին մասնակցած անձանց և հանրության հոգեբանական վերականգնման ծառայության ձեռք բերման նպատակով «Սեդա Ղազարյանի անվան հոգեկան առողջության» հիմնադրամի հետ կնքել է 01.04.2021թ. թիվ ՀԲՄԾՁԲ-ԱԻՆ-21/31 պայմանագիր՝ 100,000.0 հազ. դրամ արժեքով: 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ պայմանագրի շրջանակում ծառայություններ չեն մատուցվել և ծախսեր չեն կատարվել:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված մեթոդական ցուցումներով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթը ապահովելու համար հաշվեքննության են ենթարկվել պետական բյուջեի ծրագրերի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը՝

1. «Փրկարարական ծառայություններ» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների ծախսեր:
2. Առանձին միջոցառումների շրջանակում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումների կողմից կնքված 462,204.9 հազ. դրամի տաս պայմանագրեր, որոնցով 2021 թվականի առաջին կիսամյակում կատարված ծախսերը կազմել են 309,916.0 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Փրկարարական ծառայություններ» բյուջետային ծրագրային միջացառումով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակներից համակարգչային ծրագրի միջոցով կատարվել է 51 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի: Ընդ

որում, ընտրության արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության աշխատողների համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրություն

Պաշտոնների խումբ	«Փրկարարական ծառայություններ» բյուջետային ծրագրային միջացառում	
	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ
Բարձրագույն խումբ	0	1
Գլխավոր խումբ	1	1
Ավագ խումբ	6	6
Միջին խումբ	2	2
Կրտսեր խումբ	38	38
Պայմանագրային աշխատողներ	0	1
Տեխնիկական աշխատող	2	2
Ընդամենը	49	51

Ընտրված աշխատողների հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս ամիսների աշխատավարձերի և հավելավճարների ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընտրված աշխատողների աշխատավարձերը և հավելավճարները հաշվարկվել և վճարվել են օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված 2021 թվականի առաջին կիսամյակի ֆինանսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ցուցանիշները համադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finance և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ, տարբերություններ չեն արձանագրվել:

Հաշվեքննության ընթացքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել են անհամապատասխանություններ, որոնք համատարած չեն:

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանություններ

հազ. դրամ

Անհամապատասխանություն	Իրավական ակտ	Գումար
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ, թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-1 պայմանագիր	487.8
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Վանգակ» ՍՊԸ, թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-2 պայմանագիր	91.0
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Անգա Տրանս» ՍՊԸ, թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-3 պայմանագիր	36.4
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	Ա/Ձ Գայանե Ղազազյանի, թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/29-4 պայմանագիր	94.5
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ, թիվ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/1 պայմանագիր	865.6
Պայմանագրի շրջանակում ավելի վճարված գումար	«Նաիրիտ գործարանե» ՓԲԸ, թիվ ՀՄԱԾՁԲ-ԱԻՆ-21/11 պայմանագիր	200.0
Պայմանագրի շրջանակում նախատեսված ծառայությունները չեն մատուցվել	«Սեդա Ղազարյանի անվան հոգեկան առողջության» հիմնադրամ, թիվ ՀԲՄԾՁԲ-ԱԻՆ-21/31 պայմանագիր	33,334.0

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, առարկություններ չունի, ներկայացրել է պարզաբանումներ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝

ձեռնարկել միջոցներ ռազմական գործողություններին մասնակցած անձանց համար նախատեսված հոգեբանական ծառայությունները տրամադրելու ուղղությամբ:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների,

խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

Դավիթ Չիբուխչյան